ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

18/10/2021 - 02/11/2021

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

2 կողմ

0 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

02/11/2021

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Ազատ Վարդանյան 24.10.2021 10:59:17	Սահմանել նաև հայրական նպաստ տերմինը, տերմինի բացակայությունը խտրականություն է սեռական հիմքով:	Հարկ է նկատի ունենալ, որ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մայրության նպաստը տրվում է Աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի՝ նույն օրենքով սահմանված օրերի համար: Ընդ որում,	

			Աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրվում է միայն աշխատող կանանց՝ օրենսգրքով սահմանված օրերի համար: Ըստ այդմ, հղիության և ծննդաբերության հանգամանքով պայմանավորված արձակուրդ (որի համար վճարվում է մայրության նպաստ) կարող է տրամադրվել միայն հղի (և ծննդաբերող) կանանց: Տեղեկացնում ենք նաև, որ Աշխատանքային օրեսգրքի 176.1-ին հոդվածի համաձայն՝ երեխայի ծնվելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, նորածնի հոր ցանկությամբ տրամադրվում է հինգ աշխատանքային օր տևողությամբ վճարովի արձակուրդ, որի յուրաքանչյուր օրվա համար գործատուն վճարում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափով:	